

Գ. — Աշային ֆետուսինը քթային խանգարումի ցուցեալ ազդեցութենէ (azione riflessa) առջ եկած ըլլալը հասկընալու լուսազոյն կերպն՝ կը կայանայ ճնշորմանային միջավայրը կոկայինելու (cocainizzare, անզգայացնելու) մէջ:

Եթէ աշային խանգարումն այս պարզ միջոցով վայրկենաբար կը լանայ և այնպէս կը մնայ ամբողջ կոկայինի (անզգայացման) ներդրածութեան տեսողութեամբը, անտարակուսելի է թէ եմփանկանելու աչաց ֆետուսը քթէն կտրուան ունի:

Գ. — Շատ մեծ կործարութիւն ունի բնաց ծծակներու (tonsille palatine) զննութիւնը, վասն զի եթէ անոնք գրեթեման կամ սննդագանցութեան և կամ զայրուկի (inflammazione) մէջ են՝ կարող են պատճառ ըլլալ աչաց չիւանդութեան:

Ե. — Արատատարողատապի (dacriocistiti) և մանուսնոց արտատարակի և մանուսնոց պարագային մէջ՝ պէտք է զննել սնկափողերը. վասն զի ապագայցտած է որ սայնոյտի հիւանդութիւններէն 95-97 առ % քթի անցքերու չիւանդութենէն կախումն ունին. ուստի եթէ միայն աչքերը բուժելու զբաղուի՝ բնաւ լաւ արդիւնք մը չի ստացուիր:

Զ. — Պատշաճ է նաեւ ակունքներու զննութիւնն ընել, վասն զի ստոնոց վիճակն ալ մասնաւորապէս ցուցեալ ներդրածութեամբ կրնայ ազդեցութիւն ունենալ աչաց վրայ:

Բժպատ. Միխայեանի տառջարկած սեռով պարման մատուցող բժիշկը անտարակապ մեծ զսննութիւն պիտի զգայ, տեսնելով որ իւր օգտակար ծառայութիւնը յաջողութեամբ կը պտակուի: Պիտի սնննայ նաեւ ուրախութիւն, վասն զի իրեն զիտող հիւանդները փութով և մշտատես բժշկած պիտի ըլլայ իսկ հին գրութեան հետեւորդ և հիւանդը՝ յուսահատ պիտի մնան, վասն զի երկարատես խնամուելէ վերջն ալ՝ կամ բնաւ առողջացած պիտի չըլլան և կամ՝ անկատար:

Նորագոյն բժշկապետին արտասանած աւարտածասի վարկին բարձրութեան ահաւատաշեղ եղաւ սրտապառ տեսարան մը:

անոր ընթերցումն և վիճարանուելէ անմիջապէս վերջը՝ քննել Ուուուցչապետ Արսլան ուրախութեան արտատուքը և գրեթեման համարելու պատուեց իւր արժանաւոր աշակերտ:

Բժպատ. Միխայեան՝ որպէս զի գիտ տակի կատարելագործուի իւր սիրած մասնաճիւղին մէջ՝ ընտրեց ժամանակ մը եւս զրկուիլ հայրենի յարկէն, և մնալով իւր նախկին Ուուուցչապետներուն քով՝ անձամբ կատարել շատ մը փորձեր և գործողութիւններ: Նա կը փափաքի Է. Պոլիս գառնալ քաջավարժ մասնագիտի համբաւով:

Մեր ընդունած տեղեկութիւններուն համեմատ Բժպատ. Միխայեան հսկայաբայ սկսած է յառաջագոյնել. Օփիոյ աչքբուժին պատռոյ ընթերցող անուանուեցաւ. և հրատարակեց հետեւեալ երեք աշխատութիւնները. — Ա. *Operazione di plasticità per ilicare l'occhio artificiale in casi di curati ristretti.* — Բ. *Apparecchio motore del bulbo oculare.* — Գ. *La medicazione chirurgica in oculistica:* Վերջին երկուքը պատկերազարդ են:

Է. Ն. ՏՐԵԱՆՈՒԵԱՆ

### ԳԻՒՏԵՐ, ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. — Լուսաւորման երբ կշտեակ մը. — Գազգիացի մը Պ. Լուզովիկոս Տընէյրուզ, որ առաջին անգամ՝ Փարիզու Օփէլայի փողոցին մէջ կրաւ երկարակտե յայտ, յետոյ կազը և ալյուրը, այժմ՝ հնարած է լուսաւորող նոր նիւթ մը. նա զայն անուանած է *Lusol*. Նոր սեսակ բազապրութիւն մ'է չրածէի և զետեմտութի: Իւր շողիին խտութիւնը շատ բնէ և, իսկ ամուսի բանակը՝ շատ առատ. այս պատճառաւ թէ՛ գերբողորժածելի է, և թէ՛ զօրաւոր լոյս կու տայ:

Ահաւաստի ինչ կ'ընէ իւր հնարողը՝ *Lusol*ի մասին:

« *Lusol*ի լոյսը, յառաջ կու գայ կանթեղներու մէջ՝ որոնք արտաքին տեսքով ալքոհլի կանթեղի կը նմանին: Ներքին կազմութիւնը ամենապարզ է. այս փորձի ա-

նօթին մէջ պատրուցի սարուելն յառաջ ե-  
կած ջերմութիւնը և հերածեութիւնը բաւա-  
կան են առանց ո՛ր և է մեքենականութեան՝  
լուսաւորոյ հեղուկը բարձրացնելու, զինքը  
չօգտացնելու և խտնելու օդոյ ստատ քա-  
նակի մը հետ, որ յառաջ կը բերէ անջքան  
չլրացուցիչ լոյս: Այսքան պարզ ոճով ստա-  
ցուած արդիւնքներու կրկին և մեծ օգուտը  
կը կայանայ անոր մէջ՝ որ նախ առանց ո՛ր  
և է գործիք և խոզովակ գործածելու, ան-  
միջապէս և ամէն տեղ յառաջ կը բերուի լոյս  
մը՝ ազածնուս չափ զօրաւոր կամ տկար: Ե-  
Յետոյ՝ այս լոյսին գինը այնքան չնչին է՝ որ  
ոչ ոք կրնայ հաւատալ վարձել յառաջ:

« Այլոքը հրապուրչի լոյս մը կու տար,  
և սակայն եթէ անունք հաւասար բանակով  
սարսնչ և lusol, այս վերջինն՝ առաջինէն  
կրկնապատիկ աւելի լոյս յառաջ կը բերէ:  
Նոր կանխեղները, ջերմութիւնը աւելի կա-  
տարեալ կերպով օգտակար կ'ընեն, քան ալ-  
քահի համար գործածուած նախնական գոր-  
ծիքները: Վերջապէս lusolը ջերմութիւնը  
աւելի կ'աժառանգէ: Այս բոլորը այն աբ-  
ղիւնքին կը յանդէ՛ որ նոր լոյսը չորս-հինգ  
անգամ՝ աւելի զերազին է քան իւր նախոր-  
դը, այլոքը: Այս լոյսը շուտով պիտի սկսի  
գործածուիլ ոչ միայն բազաքներու՝ այլ և  
զիւղերու մէջ:

« Պէտք է դիտել թէ ժողովրդական գոր-  
ծածութիւնները՝ լուսոյ վերաբերմամբ ինչ-  
պէս կը փոփոխուին առն և փոքրցի մէջ: —  
Նոր դրութեան մը անյաջողութիւնը կարաւոր  
առնի մասնաւորապէս լոյսի մը զինէն: Այդ,  
lusolով՝ այս ճանապարհի մէջ՝ նոր քայլ մը  
կ'անունքը զէպ ի յառաջ: Այն լոյսը գոր  
ձերը 15 կամ 20 սանտիմով կու տար մեղք,  
(կրկնապատիկ արդարեւիկը՝ 8 կամ 10սմ,  
քարտիչը՝ 4 կամ 5սմ), 1 սանտիմով կը  
ստանանք lusolն »:

2. — Երկարական Լուսարարք. —  
Հունգարացի մը հարած է երկարական մե-  
քենայ մը՝ որով կը լուսայ առանց օճառի՝  
զգետեղէններ և ճերմակեղէններ: Ամէն ա-  
բատ կը մաքրէ: Քառորդ մը ժամուան մէջ  
կը լուսայ աւելի քան երեքհարիւր զգեստ:

3. — Աերեչ նեապոլիք Հարաւային Ա-

մերիկայի մէջ. — Մարկոնիի արիւնջ հե-  
տապիր ծովու վրայ շատ բաւ արդիւնքներ  
յառաջ բերած էր. այժմ՝ ելեկտրութեան այդ  
աներեւոյթ հասանքը պիտի անցնի Ամերի-  
կայի անխափանցիկ անասաներէն: Արիւնջ  
հետապրի նախաձեռնարման պատճառն այն է  
որ տեղացիները հետապրի թիւրբէն և չկոչ-  
բացնոյց մարմիններէն շատ վախ կը զգան  
և աւելորդապաշտութիւններ ունին անոնց  
մասին: Փէրուի մէջ, Փուէրթօ Պերմուտուէս  
և Իրուիթուի միջեւ 1000 քիլոմետր երկաշ-  
նութեամբ, երկը կայարաններով զիծ մը  
պիտի գրասի (կեսայ նոյն զիծը պիտի շա-  
րունակուի Ամազոնոց գետափին վրայէն մին-  
չեւ Փարա, ու պիտի միացնէ Աւալանդակա-  
նը Խաղազականի հետ:

4. — Երկրագործ մեքենայն. — Մշա-  
կութիւնը հետզհետէ կը զրկուի իւր բանա-  
ստեղծական երեւոյթէն, և ճարտարարուես-  
տի կերպարանք կ'առնէ: Մեքենաները գոր-  
ծարաններու մէջէն՝ ընդարձակ դաշտերու մէջ  
կ'ելլեն: Մշակներու տեղ՝ ինքնաշարժ մե-  
քենաները, մանդագինքն առած, պիտի թա-  
փառին արտերու մէջ և զանոնք պիտի հրն-  
ձեն: Անգղիական ժողով մը տեղի ունեցած է  
ընդարձակ մարդագետնի մը վրայ, զոր  
լուսաւորած էին այէրիլեկի լուսով. մեքե-  
նական շարժիչը սկսաւ վազել՝ իւր ետեւէն  
բաշխելով մանդագինքն. երեք ու կէս ժամուան  
մէջ կրցաւ վեց հէկտար տեղ հնձել:

5. — Մրեւոյրտային Երկարականու-  
րիւնք և Լարտեաի դրոշմիւնք. — Մտնօթ է  
բոլոր քնարաններուն՝ թէ միմուրտաի երկի-  
տրականութիւնը զէպ ի ցած՝ միտական է,  
իսկ մերը՝ գրական: Ինչ է պատճառոր միմու-  
րտային երկարականութեան: Կ'անխափան  
շաւարք թմ մի կամ՝ երկու աներեւոյթ հա-  
սանիւթ կայ՝ որ իրենց կը ձգեն եկեղը: Բո-  
ւտ Լարտեաի երկերիս իւր շրջանը կ'ընէ  
արեգական շուրջ, իւր մագնիսութիւնը՝ երկրի  
այլ և այլ զիրքերուն համեմատ՝ աւելի կամ՝  
նուազ չափով իրեն կը բաշէ եկեղը, այսու  
յառաջ կու գայ միմուրտային երկարակա-  
նութիւնը: Այս պատճառաւ է որ իւրաքան-  
չիւր եղանակի մէջ նա հաւասար կերպով  
չ'արտայայտուիր:

6. — Գեղարուևտը Մեծն Կոստանդիստանի ժառանգակ. — Ընդհանրապէս կը զըրպարանն զՄեծն Կոստանդիանոս, իբր թէ գեղարուևտի անկման պատճառ եղած ըլլայ՝ կուռքերը կործանելով: Այժմ Գեղարուևտցին Պայսրլ՝ Կոստանդիանոսի հրովարտականքն ի մէջ բերելով՝ կ'ապացուցանէ թէ անոնց մէջ կը պատօրբութի ոչ թէ կուռքերը կործանել, այլ գեղարուևտի աչք գործեուն՝ ս եւ է վնաս չհասցնել: Բայց Կոստանդիանոսի նկատմամբ եղած պարսաւանքներն այլ պատմական հիմ մը ունին, ըստ որում նա յիրաւի Արեւելքի կուռքերը հրամայած է աւերել, վասն զի անոնք յամառ ժամպարսվայք էին անբարոյական ծամաբանեանքու: Ուստի Կոստանդիանոս, կ'ըսէ Պայսրլ, գեղարուևտի դէմ երբեք մեղանշած չէ, այլ միայն արեւելեան գեղծութեան դէմ կուռած: Պայսրլն ուսումնասիրութիւնը՝ պատմական մեծ շրջան մը կը լուսաւորէ: Հեղինակը կ'աւելցնէ թէ յաջորդ կայսերք գեռ աւելի ներողամտ եղած են կուռքերուն նկատմամբ, սկսեալ Մեծն Թէոփոսէ: Կուռքերու անունը ներք՝ սուրբերու անուամբ կը մկրտէին կամ անոնց վրայ կայսեր մը պոլոսը կ'անցնուէին, այսպէս կը պահէին զանոնք: Իսկ սաճարները եկեղեցի կը դանաչային:

7. — Հայկական Պատարագի Ս. բաժանումները. — Բեսարպիոնէ թերթին մէջ կը կարգանք հետաքրքրական յօդուած մը Ս. Պատարագի արարողութեանց վրայ. թէպէտև հեղինակը Լատինաց եւ Յունաց վրայ կը խօսի, իսկ շատ բան կը յարմարի նաեւ Հայկականի: Այսպէս Հայկական Պատարագն ալ երկու մասի բաժնուած է, որուն առաջինը երախայից պատարագ կ'անուանուէր. երբ սա կը վերջանար՝ Սարկուագը կ'ըսէր « Զգրուուն զգրուուն ամենայն զգուշութեամբ ». ապա խորոզները դուրս հանելու համար: Հայերուն պէս Յոյներն ալ ցարդ պահած են աչք բռնորդ, բայց ոչ սովորոյթն: Տիւ չկնր դազգիացին, այս բաժանման վրայ խօսելով, այն եզրակացութեան կու գայ՝ թէ սասլին Պատարագը՝ Հրէից Սինակիպիցի մնացորդ մ'է, երկրորդը՝ միայն զուտ քրիստոնէական: Այսու հիւ եւ կար ոչխոր միանգամայն կը ներ-

կայացուին: — Եոյն թերթը՝ Վրաց քրիստոնեայ գառնալուն վրայ ուսումնասիրութիւն մը կը հրատարակէ, ըստ բաւականի հետաքրքրական:

8. — Մանձնիկի կար հատակտորները. — Գաղղիական Revue des deux Mondes յօդուած մը կը նուիրէ Մանձնիկի այն հատակտորներուն վրայ՝ զորս հեղինակը չէ հրատարակած քաղաքական ակնարկութիւններ բովանդակելուն համար. առնք 1905ին հրատարակուցան: Հեղինակուր թերթն կը պարտէ Մանձնիկի վէպին պատմական երկայն նկարագրութիւնները, բայց շատ գեղեցիկ կը գանէ. ե կը ցանկ որ իտալիայէն զուտ ինթերցող չունի այլ եւս, միջնավայրը զուտ խառակայն ըլլալով:

9. — Արեւա ըստ արդի փիլիսոփայից. — Յունաստանով՝ կուրբար խնդալապուղ արդի փիլիսոփաներէն շատեր Ակրոպօլի Աթենասը՝ բանակուտրքուան առաջին արձանը նկատած են: Մօրիս Պարբէս՝ նշանուար գրիչը՝ Revue des deux Mondes-ի մէջ կը հրատարակէ իւր ճամբորդութիւնը գէպ ի Սլաւարտ: Աթենացոց ուրիշ քաղաքաց հետ բրած բանակցութիւնները մէջ բերելով հոս՝ կ'ապացուցանէ թէ Աթենաս Ոյթը կը ներկայացնէր, ե թէ Յոյներ յաճախ զայն իրաւունքէ զերազատած էին: Ուղեորութեան մնացած մասը գրուած է հըմայիչ եւ խնդալապ սնով մը:

10. — Հրեական Հանրագիտակր. — Լանարայի մէջ լոյս կը տեսնէ Հրեական Հանրագիտակր The Jewish Encyclopedia, ուր Հրեական հարցերուն վրայ առաջնակարգ յօդուածներ գրուած են: Հին Հրէից բոլոր սովորոյթները մանրամասն նկարագրուած են. ամէն ոք որ քրիստոնէական հնասխօտութեամբ պիտի գրադի, հարկ պիտի զգայ անշուշտ Հրեական Հանրագիտակրն պիտելու:

11. — Հերովիցեի Արձանագրութիւն մը. — Պաալպէքի մօտեր, Եարբուն կուռած տեղը գտնուած է Հերովիցեի Ալքիթալպու Քի նոր արձանագրութիւն մը: Հնն կը պատմունք քաջագործութիւնըը մէկուն՝ որ քառասուն սարի քահանայ կեցծելով ինքզինք մեծամեծ գանձեր հաւաքած էր:

12. — Պատմութիւնը՝ գիտութիւնն է. — Անգլիացի մը, Կոլտուին Սմիթ, Ամերիկայի Պատմական Հանդիսին մէջ, կը պաշապանէ թէ Պատմութիւնը՝ գիտութիւն չէ, ըստ որում մարդկային կամքը՝ որ անոր մէջ գործող գլխաւոր պատճառն է, փոփոխական և անհաստատ բան մ'է: Իւր կարծիքը՝ միայն պատմաբան փիլիսոփայուորիներն է գիտութիւն:

13. — Ողիտականի աշխարհագրութիւնը. — Վիկտոր Պէրսոն գաղղիացին՝ Միջերկրականի ափանց վրայ ուղեւորութիւն մ'ընելէ վերջ, հրատարակած է Ողիտականի աշխարհագրութեան վրայ ստուճասիրութիւն մը: Դա կը համարէ՝ թէ Փիւնիկեցի նաստաիներ ուղեգիրք (Guide) մ'ունէին, որ Հոմերոսի ձեռքն ընկած է և անոր աղբիւր եղած: Կարծիք մը՝ եզական, բայց ոչ բւրրոյին գուրի հաւանականութիւնն է:

14. — Խոսարական գրականութեան ուղեցուցիչներ՝ գերմանականին վրայ. — Չարմանալի պիտի թուի բռնի՝ թէ Գերմանական խոր մտածութիւնը, երբեմն աշակերտած է իտալականին: Էտտիկ Վակնէր, Թաստօի վրայ ստուճասիրութիւն մը գրելով՝ Շիլլէրի Jungfrau von Orlean Թաստօի կրթիկնային կը նմանցնէ: Շիլլէր, Թիլք, Նովալիս, Պրէնթանո, Բլայնթ, և այլն, հեռուողներն են Թաստօի: Գաղղիացի մ'ալ կարսլոս Քապին, առանձինն գրքով մը կ'ու-

ստուճասիրէ Խոսարացի Giambattista Marinotti ուղեցուցիչները գաղղիացոց կրակահարութեան վրայ ժէ գարուն մէջ:

15. — Հայերը՝ ժՁ դարու Խոսարացի հեղինակի մը մէջ. — ժՁ գարուն Giovanni Botero անուամբ հեղինակը, կրօնքննիչու վիճակագրութիւնը գրած է, որ Հայոց համար կ'ըսէ. « Ասոյ մէջ կան Հայեր, շատ բազմաթիւ, Մելիթիներն քիչ մը նուազ, երկու պատրիարք ունին. Մեծ Հայոցը կը նստի Էջմիածնին մէջ, Երեւանի մօտ. իսկ Փոքր Հայոցը՝ ի Միս Գարամանիոյ: Անոնցմէ շատերը կարմիր Ռուսաստանի մէջ կը բնակին »: Խաւրիոյ Աշխարհագրական բերքը որ այս գրութիւնը հրատարակած է, Հայոց վիճակագրութիւնը կ'ընէ. — Ըստ իրեն՝ Հայերը երկու միլիոն են միայն, և ասոր ի վկայութիւն կը կոչէ Մարինէլի (Բ, 151) Պալպի (Ա, 77). իսկ ըստ Ֆուսիլի, Հայերն են միայն 1,690,000:

16. — Ինքնաշարժ անիւի սպասույն. — Փարիզու մէջ այսուհետեւ ինքնաշարժ անիւր պիտի կատարէ սուրհանդակի պաշտօն: Ինքնաշարժ անիւ մը յորինուած է նաեւ՝ մի քանի բուլղի մէջ փողոցները աւելլու և թրջելու համար: Վերջապէս պատերազմի ժամանակ ինքնաշարժ անիւով պիտի փոխադրուին թղանաօթները:

Հ. Ա. ՅԱՎԱԹԵԱՆ

ԱՆՈՒՇ ՉԱՅՆՈՂ



Ո՛րքան ծայեր անուշ եկան ինձ աշխարհիս երեսին,  
Սակայն մէկ օր, մէկ տարի, մէկ դար ... եւ յետոյ վերստին  
Անուշ կարծուածքն դառնացան, ու մերէն թոյն բլխեցին . . .

Գերեզմանիս մէջ կը հանգչիմ արդ . . . եւ կարգաւ՝ մի սու մի՛  
Այցելութեան եկան ինձ հայրս եւ մայրս ու եղբայր սիրելի,  
Քոյրս՝ ամուսնոյս հետ թեւախառն, եւ որդիքներս անծկալի:

Ո՛րքան անուշ էր ծայերնին . . . բայց հեռացան . . . չեմ լլսիր.  
Անուշ ծայերն անհետացան բոլոր . . . Մի՛ ծայն միայն էր,  
ԱՆՄԱՃՈՒԹԵԱՆ ծայնս՝ որ անուշ հրնչէր, ու բնաւ չըզտուէր:

Հ. Ա. ՏԻՐՈՅԱՆ